ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 3, 1955 Общественные науки

Աշոտ Հովհաննիսյան

ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐՅԱՆՑԻ ԳՐԱԿԱՆ ԱՐԽԻՎԸ

Միքայել Նալբանդյանի ծննդյան 125-ամյա տարեդարձը նրա կյանքն ու երկերը հետազոտողներին նոր առիթ ընծայեց՝ որոնումներ ձեռնարկելու նրա անհայտ մնացած կամ կորած աշխատությունների հայտնաբերման ուղղությամբ։ Այս տեսակետից կարևոր են ոչ միայն մեր պետական հիմնարկներում պահված ֆոնդերի մեջ կատարվող հետախուզությունները, այլև հրապարակախոսի կամ նրա հետ կապ ունեցած անձնավորությունների թողած և ներկայիս մասնավոր մարդկանց մոտ գտնված պատահական նյութերի կամ ժողովածուների մեջ կատարելիք հետաքննությունները։

Ստորև հրապարակում ենք Ս. Նազարյանցի մահից հետո նրա թղթերի մեջ հայտնաբերված գրական նյութերի ու նամակների ցուցակը, որ տարիներ առաջ ստացել էինք մեր բարեկամ պրոֆ. Լ. Զ. Մսերյանից։ Ցուցակը կազմվել է Մոսկվայում, 1879 թ. հուլիսի 16-ին, Նազարյանցի մահից մոտ երեք ամիս անց նրա կտակակատարի՝ Մելքոն Փանյանի ձեռքով։ Ժամանակին նյութերի այդ ցանկը տեսած է եղել և աննշան չափով օգտագործած Ս. Շահազիզյանը՝ իր «Հրապարակախոս ձայն» պոլեմիկական աշխատության մեջ։ Այդտեղ հրապարակված են Նազարյանցի անտիպ այն գրվածքների վերնագրերը, որոնք ստորև տպված ցուցակում նշանակված են 1—5 և 7—10 համարների տակ[1]։ Ցուցակի 6 և 11-ի ներքո նշված հոդվածների վերնագրերը Շահազիզյանը բաց է թողել այն նկատառումով, որ այդ գործերը տպագրված են արդեն։

Մ. Փանյանի կազմած ցուցակը հիմնականում հանդիսանում է «Հյուսիսափայլ»-ի խմբագրության արխիվի նյութերի ցանկը, որչափ այդ նյութերը դեռ պահվել էին մինչև ցուցակագրման տարին։ Ցուցակը չի սպառում հարկավ ոչ «Հյուսիսափայլ»-ի և ոչ իսկ Նազարյանցի գրական բովանդակ ժառանգությունը։

Փանյանը հաշվի էր առնում միայն այն նյութերը, որոնք առկա էին Նազարյանցի ընակարանում։ Ցուցակից դուրս են մնացել մեռած հրապարակախոսի այն գործերն ու նամակները, որոնք գտնվում էին մասնավոր անձանց մոտ կամ այլևայլ հիմնարկների գործերում, և որոնց նշանավոր մի մասը ներկայիս տպված է արդեն։ Սակայն, տակավին անտիպ են մնում Նազարյանցի բազմաթիվ նամակները, որոնց մասին ոչ մի հիշատակություն չկա Փանյանի ցուցակում։ Մասնավորապես Նազարյանցի անտիպ նամակներ կան Կազանի համալսարանի, Լազարովների տոհմային արխիվում (որ ներկայիս գտնվում է Երևանի հանրային գրադարանում),

[1] *Տես* Ս. Շահազիզյան, *Հրապարակախոս ձայն, Մոսկվա, 1881, էջ 24։*

Պետերբուրգի ցենզուրային կոմիտեի արխիվում, Մատենադարանի արխիվի այլևայլ ֆոնդերում և Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի գրականության և արվեստի թանգարանում։ Մասնավոր մարդկանց մոտ տեսել ենք Նազարյանցի՝ ընտիր գերմաներենով գրած բազմաթիվ նամակները, ուղղված Թբիլիսի՝ բժիշկ Միանսարյանին, 1878 թվականին արտասահմանից, ուր նա բուժվում էր։

Նազարյանցի մահվան ժամանակ նրա արխիվում չէր գտնվում, ըստ երևույթին, նրա ստացած նամակների մեծ մասը։ Այսպես՝ Փանյանի ցուցակում նշված է միայն Նալբանդյանի գրած նամակներից մեկը։ Բացարկված չէ, որ Նալբանդյանի կալանքից կամ աքսորից հետո Նազարյանցը «խոհեմաբար» ոչնչացրել էր Նալբանդյանի նամակները։

Այնուամենայնիվ, հրատարակվող ցուցակը զուրկ չէ արժեքից։

Ցուցակում հիշատակված են Նազարյանցի մի շարք թղթերն ու նամակները, որոնք անտիպ կամ անգյուտ են տակավին։ Ավելի ընդարձակ են և հետաքրքրական Նազարյանցին հասցեագրված, միանգամայն անհայտ թղթերի ու նամակների ցանկերը։ Այս կարգի նշումները պարզում են կամ ճշտում ստացողի ունեցած շփումների ու ծանոթությունների շրջանը։

Մասնավորապես հետաքրքրական են այլևայլ հեղինակների կողմից «Հյուսիսափայլ»-ին հղված նյութերը, որոնց մի մասը, պիտի կարծել, չեն տպագրվել ամսագրում «անհարմարության» կամ ցենզորական արգելքի պատճառով։ Առանձնապես ուշագրավ է Վարշամյանցի՝ «Հայաստանի գավառական կյանքից առած խոսակցության ձևով» վերնագրված 70 էջանոց հոդվածը։

Պարզված պիտի համարել, որ «Վարշամյանը» Նալբանդյանի բազմաթիվ կեղծանուններից մեկն է. 1860 թվականին «Սարգիս Տեր-Միքայելյան Վարշամյանց» ստորագրությամբ «Հյուսիսափայլ»-ում լույս տեսավ «Նամակ Կոմս Էմմանվելին» վերնագրված մի հոդված, որն իր բնույթով և ձևով հիշեցնում է Կոմս Էմմանվելի «Հիշատակարան»-ում զետեղված նամակները և, ինչպես պարզված է, պատկանում է Մ. Նալբանդյանի գրչին[1]։ Ամենայն հավանականությամբ Փանյանի կազմած ցուցակում նշված հոդվածը ևս պատկանում էր Նալբանդյանին և, ըստ երևույթին, գրված է եղել դարձյալ 1860 թվականին՝ նրա դեպի էջմիածին կատարած ուղևորության կապակցությամբ։ Դատելով վերնագրից՝ այդ հոդվածում նա պետք է ծանրացած լինի Արարատյան դաշտի գյուղացիության կացության վրա՝ նախապատրաստելով նույն նյութի մասին «Սոս և Վարդիթերի» կրիտիկայի էջերում արած դիտողությունները։ Ենթադրում ենք, որ Վարշամյանցի այս հոդվածը «Հյուսիսափայլ»-ում չտպագրվեց, ցենզորական արգելքի պատճառով։

Պահվո՞ւ են արդյոք ցուցակի թվարկած նյութերը։

Եղել են ասողներ, թե Նազարյանցի բոլոր թղթերը նրա մահից հետո պահված են եղել հենց իր՝ Մ. Փանյանի մոտ[2]։ Կյանքի վերջին տարիներին Փանյանը ապրում էր իր ծննդավայրում՝ Ադուլիսում։ Որպես գրագետ ու գրասեր մարդ նա մոտիկ ծանոթություն էր ունեցել և նամակա-

[1] Մ. Նալբանդյան, Ե. Լ. Ժ. հատ. 2, 296 և 434 էջ.։

[2] Տես «Հանդէս գրականական և պատմական», 1888, 1-ին գիրք, 266 և Լեո. Ստ. Նազարյանց, Թիֆլիս, 1902, հատ. Լ, 359 ծանոթություն։

գրության մեջ է գտնվել Նազարյանցի և Նալբանդյանի, Շահազիզյանի և Բաֆֆու հետ։ Այս հեղինակներից ստացած նամակների մեծագույն մասը տպագրվեցին Էջմիածնի «Արարատ»-ում (1916)։ Եթե Փանյանի մոտ պահված նյութերը, այդ թվում նաև Նազարյանցի գրական արխիվը Ագուլիսի ավերման ժամանակ (1918) չեն ենթարկվել ոչնչացման՝ ցուցակի հրապարակումը կարող է առիթ ծառայել որոնելու դրանք։

ՑՈՒՑԱԿ

ԹՂԹՈՑ ՀԱՆԳՈՒՑՅԱԼ ՍՏԵՓԱՆՈՍ ԵՍԱՅԱՆ ՆԱԶԱՐՅԱՆՑԻ

1879-ամի. Մոսկուա

№ 1. Հայոց ժողովուրդը՝ նորա այժմյան լեզվի և մատենագրության վիճակը Ռուսաստանում։ Համառոտ տեսություն։

Քառածալ տետրակ, գրված 34 երես։ Ավարտած։

№ 2. Պատմաբանական։ Հռովմեական եկեղեցին և նոր ժամանակի քաղաքական բարեկարգությունը։ (Քաղված ամերիկացի պատմաբան Դրեպերի գրվածներից)։

Ութածալ տետրակ, գրված 42 երես։ Ավարտած։

№ 3. Քիմիական նկարագիրը։ Առօրյա կյանքի մեջ գործածական նյութերի ըստ... (Չի նշանակված Ա. Հ.)։

Ութածալ տետրակ, գրված 27 երես։ Ավարտած։

№ 4. Իմաստասիրականը։ Անձնագիտություն, ներքին աշխարհ. անձնաճանաչության իբրև հայտարար նշան գործության։

Ութածալ տետրակ, գրված 16 երես։ Շարունակությունը հետո։

№ 5. Կրիտիկա։ Միջակ վարդապետարան ուղղափառ հավատո, Հայաստանյայց եկեղեցվո, շարագրյաց Դ. Վ. Այվազովսկի, Փարիզ, 1858 թ.։

Ութածալ տետրակ, գրված 12 երես։ Ավարտած և ցենզուրան թույլ չտված «Հյուսիսափայլ»-ում տպելու։

№ 6. Ազգային նկատողություն։ Մի նամակի առիթով, որ ստացած է Շամախուց։

Մի փոքրածալ փոշտի թերթ, 4 երես, ցենզուրը թույլ չտված տպելու։

№ 7. Նոր հայկազյան օրագիր «Վասպտեր Հայաստանի»։ Մեծապատիվ հասարակության հայոց ազգասիրության։

Երկու փոքրածալ փոշտի թերթ, 5 երես։ Ավարտած։

№ 8. Դպրոցական բերականություն ֆրանսիական լեզվի. որ պարունակե սիստեմատական բերականություն կարգյալ ըստ մասանց բանի և մեթոդական բերականություն հանդերձ ֆրանսիական և հայկական թարգմանելի նյութովք. 1875 թ.։

Քառածալ տետրակ, գրված 40 երես։ Չավարտած։

№ 9. Ազգերի արմատը և նոցա ճյուղավորությունքը. լուսափայլ կացուցած ժողովրդագրության առավել նոր փորձերի հիման վերա։

Քառածալ տետրակ, գրված 21 երես։ Չավարտած։

№ 10. Պատմություն հայկազյան դպրության։ Հասարակախոսություն։

Քառածալ տետրակ, սրբագրած, 55 երես։ Իսկ սկը ցնում է մինչև 9-րդ դարը։

№ 11. Լաս կազաս, Ինդիանացոց պաշտպանը, բարոգելով ավետարանը։ Ազնիվ քահանայն Լաս կազաս, Քրիստոնեական առաքյալը և անվաստակելի բարեխոսը ինդիանացոց։ Մնյալ 1474 և վախճանյալ 1566-ին։

Քառածալ տետրակ, գրված 17 երես։ Չավարտած։

№ 12. Ճառեր (?)։

ա) Ասած յուր տան մեջ, էմմանվել որդվո մահվան. 19 մարտի 1866. Մոսկվա։

բ) Ի հանդիսի ընդունելության Վ. Գեորգ կաթողիկոսի, ճեմարանի դահլիճում, 21 սեպտեմբ., 1867, Մոսկվա։

գ) Յուր Ֆրիդրեկոս որդո թաղման, եկեղեցում. 21 փետրվարի 1868-ին, 1868. Մոսկվա.

դ) Կեոքչյանց ավագ քահանայի թաղման, եկեղեցում։ 16 ապրիլի 1875. Մոսկվա.

ե) և զ) Ներսիսյան դպրոցում. Թիֆլիզ.

է) Յուր տան մեջ, մեծ դուստրը եկեղեցի գնալուց պսակվելու. Մոսկվա.

ը) Ի ժամանակի ընդունելության Խորեն եպիսկոպոսի Նարպեյ. 26 սեպտ. 1878. Մոսկվա։

թ) Ժողովքում վասն կազմելու ընկերության Հայոց Մոսկվայի մեջ։ 27 հոկտեմբերի 1860. Մոսկվա։

№ 13. Պատճեն նամակաց (12)։

ա) Քաջափայլ իշխան Խ. Հ. Լազարյանց։ 1948. Ղազան,—բ) Ազաֆոն Դ. Հարիմյանց. 1852. Մոսկվա։— գ) Սայութնովյանց. 1855. Մոսկվա։ դ) Դ. Վ. Այվազովսկի. 1857. Մոսկվա։— ե) Ասկարյանց, Շորոյանց (sic), Դոդոխյանց և Ամատունի. 1857 Մոսկվա։— զ) Խ. Հ. Լազարյանց, ոտանավոր. 1863. Մոսկվա։ է) Քուչուբեգյան. 1866. Մոսկվա։— ը) Ս. Վ. Պարոյանց. 1868. Մոսկվա։— թ) Պ. Սիմեոնյանց. 1869. Մոսկվա։— ժ) Ստեփան ավագ Ք. 1877. Մոսկվա։ ժա) Գէորգ կաթողիկոսին վասն ընթացքի Մանկունո ի ժամանակի թաղման Արել եպիսկոպոսի։— ժբ) Նույն կաթողիկոսին. թերատ.

№ 14. Պատճենք նամակաց ռուսերեն (8)։

ա)Попечит. Моск. учебн. округа—Исакову. բ) Его сиятельству... գ) То же դ) Прошение к Г. министру нар. просв. по вопросу об арм. журнале „Светочь Армении" и проект к тому; 23 мая, 1868. Москва. ե) Х. Е. Лазареву 1870. Тифлис. զ) В цензурный комитет. է) Графу Дмитрию Андреевичу. . . . . ը) Его сиятельству...

№ 15. Հառաջարկություն, հայտարարություն Ներսիսյան դպրոցի հոգաբարձական ժողովին 1870 թ. Տփխիս. (5)։

№ 16. Ռուսերեն գրվածք եոթն տետրակ (7)։

ա) Индия. Кастическое воспитание: երկու տետրակ. քառածալ. գրված 72 երես։

բ) Миссия аравитян как всемирных деятелей истории։

Քառածալ 35 երես։

գ) Отзыв профессора персидской словесности по поводу вопроса, возбужденного в Совете о неправильной постановке арабского языка при Специальных классах Лазар. Института.

Մի քառածալ տետրակ, 14 երես։

դ) Извлечение из конспекта преподавания персидско-арабского языка, в I и II лицейских курсов Лазаревского Института.

Քառածալ գրված 6 երես։

ե) Управление по делам печати.

4 երես։

զ) Заявление в Совет Специальных классов Лазаревского Института.

է) В разные общественные учреждения.

5 երես երկու ծալ թերթի։

ՅՈՒՅԱԿ ՉԱՆԱՉԱՆ ԹՂԹՈՑ, ԱՌ Ս. Ե. ՆԱՉԱՐՅԱՆՑ

№ 17. Կոնդակք (7).

ա) Ներսես կաթողիկոսից 10 փետր. 1854 թ. Ս. Պետերբուրգ.

բ) Գեորգ կաթողիկոսից 26 հունիսի 1867 ի Սբ. Էջմիածին.

գ) Երուսաղեմից 31 մարտի 1868 թ.

դ) Գեորգ կաթողիկոսից 11 նոյեմբերի 1869 ի Սբ. Էջմիածին.

ե) Նույն կաթողիկոսից 27 դեկտեմբերի 1872 ի Սբ. Էջմիածին.

զ) » » 16 նոյեմբերի 1874 ի Սբ. Էջմիածին.

է) » » 4 դեկտեմբերի 1874 ի Սբ. Էջմիածին.

№ 18. Նամակներ (43). (184—1878)։

ա) Սերովբե եպիսկոպոսի։ բ) Առանց անունի։ գ) Ազաֆիրյանց։ դ) Ազաֆոն Ակիմյանց։ ե. Ղ. Շիյանց։ զ) Նույնը։ է) Վ. Ասկարյանց։ Շարուրյանց, (sic)։ Ամատունի և Դոդոխյանց։ ը) Հ. Շեմիյանց (sic)։ թ) Մ. Նալբանդյանց։ ժ) Լ. Էլիմիզյանց։ ժա)

Հ. Իզմիրյանցի ժբ) Ս. Վ. Պարզյանցի ժգ) Մ. Սանասարյանցի ժդ) Հ. Խիրումյանցի ժե) Ա. Սուլթան Շախյանցի ժզ) Խորեն Եպիսկոպոս Նար Պեյի ժէ) Նույնը: ժը) Պարզյանցի ժթ) Տեր Սարգսյանցի ի) Հ. Միրզաբեգյանցի իա) Հ. Պոնճուրյանի իբ) Խ. Վ. Ստեփանեի իգ) Վ. Վ. Բաստամեանցի իդ) Նույնը: իե) В. Ходжаев: իզ) Ա. Բենլեանցի իէ) Մ. Ղափլանյանցի իը) Եղիշե Վ. Մեծատուրյանցի իթ) Նույնը: լ) Օր. Ի. Մեծատուրյանցի լա) Ե. Վ. Մեծատուրյանցի: լբ) Նույնը: լգ) Խորեն Եպ. Նարպեյ: լդ) Ստեփաննոս, Ավագ քահանայ լե) Ա. Բահաթուրյանց: լզ) Ն. Վ. Մեծատուրյանցի լէ) Ա. Բահաթուրյանցի լը) Օվս. Նազարյանցի լթ) Հ. Սարկավագ Ալամդարյանց (որև Կեոքչեյանցը): խ) Քաջբերունի խա) Ա. Իսահակյանցի խբ) Կ. Հայրապետյանցի խգ) Մաթեոս Եպիսկ.:

№ 19. Նամակներ ռուսերեն և գերմաներեն (22) (1819-1879):

ա) От Буткова. բ) Христ. Лазарева. գ) Ивана Дельянова. դ) М. Навроцкий ե) Тоже. զ) С. Султани[illegible]а. է) Тоже ը) Н. Д. Делянова. թ) (չի նշված) ժ) Хр. Лазарева ժա) Тоже. ժբ) Н. Делянова. ժգ) Тоже. ժդ) Тоже. ժե) Кн. Абамелик Лазарева. ժզ) Тоже.

Գերմաներեն ժէ), ժը), ժթ), ի), իա), իբ), Նշումները բացակայում են (Ա. Հ.)

№ 20. Պաշտոնական թուղթեր ռուսերեն (15)

ա) և բ) Кавказского Комитета (Буткова). գ), դ), ե) Кавказского Комитета (Гулькевича) զ) Арх. Епис. Матвей է) Мин. Нар. Просв. ը) Московского Почтамта թ) Устав Нахичеванского Арм. Благотворит. Общества, цель учреждения и права Об-ва. ժ) Хр. Лазарева. ժա, ժբ, ժգ) Тоже. ժդ) Мин. Внутр. Дел Главн. Управл. по Делам Печати ժե) А. Крузенштерн.

№ 21. Զանազան հոդվածներ (17) երևի Հյուսիսափայլի մեջ տպելու:

ա) Զայն բարբառո յանապատի

Ութածալ, 19 երես:

բ) Տամբով և Շացք քաղաքների վիճակավոր Մակար եպսի ճառը, որը ասվել է ռուսաց թագավորության ժառանգի, մեծ իշխան Նիկոլայ Ալեքսանդրովիչի անվանակոչության տոնախմբության օրին՝ 6 դեկտ. 1858:

Ութածալ, 6 երես:

գ) Բարկայ Հայ հովուին երգ ի գարունն:

Ութածալ, 12 երես Ի. Ս. Բ.:

դ) Կանանց բախտավորությունը և անբախտությունը:

Քառածալ, 20 երես: Հ. Մաղլումյանցի

ե) Քրիստոնեական հավատը ինչպես են ուսուցանում մեր ազգի մեջ և ինչպես պիտի այն ուսուցանել —Վ. Բ.:

Հինգ երես:

զ) Հայաստանի գավառական կյանքից առած խոսակցության ձևով: Վարշամյանցի

Քառածալ տետրակ, 70 երես:

է) Ազնիվ բարեկամ Մանուել բարոն: Կարին Գ. Երկարդլխյանց 1862. Քառածալ տետրակ, 12 երես:

ը) Պատասխանագրություն «Մասիս» լրաթերթին նկատմանց դեմ: Մեծատուրյանցի: Քառածալ, 9 երես:

թ) Բողուչի Մոնք, Կովկասյան սարերի մեջ բնակող զանազան ազգերի մինը ես սոքա են: Մելիք Ս[իմո]նեանցի:

Քառածալ, 12 երես:

ժ) Հարդի բարեկամ պարոն Հ. Ք. (sic) Մելիք Հակոբյանց 1862. Քառածալ տետրակ, 36 երես:

ժա) Ներսիսյան դպրոցի աշակերտ Մաղաթյանց շնորհավորում է Նազարյանցի Նոր տարին 1870. Տփխիս:

ժբ) Հանեալ ի մատենէ խորագրելոյ «Գերմանիա և Ռուսաստան. ի միջոց յիսնից ամաց եղիցի Եվրոպա կազակաց. Նապոլեոն»:

Երկու ծալք տետրակ, 27 երես:

ժգ) Ն. Սահակյանցի ճառը. 15 հունիսի 1869 թ.:

ժդ) Սիրելի եղբայր իմ Լուսիկ (Լուսիկ Հյուսիսափայլն է): Կ. Խաչատրյանց. 1859:

Երկու ծալք տետրակ, 7 երես:

ժԱ) Մի քանի խոսք հայոց մասին Ռուսաստանի մեջ և կոչի «Հայք Եվրոպայում» հոդված՝ թարգմ. Մ. Թուտեանց. Մ. Պ. Բուրգ.։

Երկու ծալք տետրակ, 16 երես։

ժզ) Գերդաստան կամ ընտանեկան տուն։ Մ. Բուզաղյանց 1861։

Երկու ծալք, տետրակ 50 երես։

ժէ) Մի տետրակ. Մ. Նազարյանց։

Երկու ծալք, 9 երես։

№ 22. Հոդվածք ռուսերեն (4)

ա) Язык Кавказской области.

Քառածալ տետրակ, 40 երես։

բ) Մտածություն հրապակոխոսության վերա. Շարունակություն (տես Հյուսիսափայլ, № 1, 1861).

31 երես,

գ) Памятник Розенгейма.

Քառածալ տետրակ, 7 երես։

դ) Краткое изъяснение о единстве и разногласии веры церкви Армянской и церкви Греческой. Ее изложение сочинено армянским Архиепископом Михаилом Салантьяном, который издал многие богословские и ученые книги, напечатанные в типографии Московского Лазаревского Института Восточных Языков.

Երկու ծալք տետրակ, 23 երես։

№ 23. Грамматика Ново-Персидского языка.

Երեք տետրակ, 133 երես։

1879 թ. հուլիսի 15-ից Մոսկվա։

ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆՑ

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

№ 1.

Նազարյանցի այս վերնագրով մեզ հասած հոդվածը գրվել է 1876 թ. և կրճատումով լույս է տեսել հեղինակի մահից հետո՝ 1888 թվականին, «Հանդէս գրակ. և պատմ.» առաջին գրքում։

№ № 2—5.

Այս համարների ներքո նշանակված գրությունները, ըստ երևույթին, «Հյուսիսափայլ»-ի համար Նազարյանցի պատրաստած հոդվածներից են։ Այդ մասին են վկայում № 4-ի «Շարունակություն հետո» խոսքերը և № 5-ի «Կրիտիկա» ընդհանուր վերնագիրը. այդ «գլխարկի» տակ գրվում էին «Հյուսիսափայլ»-ի մատենախոսական բաժնում գնահատվելիք հոդվածները։

№ 5.

Այվազովսկու «Վարդապետարանի» և մասնավորապես Նազարյանցի այս գրվածքի մասին տես Մ. Նալբանդյան «Անտիպ երկեր», 340 և հետ, հատկապես եր. 356 և հետ։

№ 6.

«Ազգային նկատողություններ»-ի նյութը վերաբերում էր Շամախու հայ լուսավորչականների և լյութերականների 1860 թ. կռիվներին, որոնց նույն այդ ժամանակ անդրադարձավ «Հյուսիսափայլ»-ը, ուր գտնում ենք Նազարյանցի հոդվածը նույն այդ վերնագրով։ Պետք է ենթադրել, որ «Հյուսիսափայլ»-ում այդ հոդվածը տպվել է կրճատ կամ փոփոխված ձևով, որ չափով նախնական տեքստը արգելվել էր ցենզորայի կողմից։

№ 7.

Ցենզորական կոմիտեի թղթերում պահված է «Լապտեր Հայաստանի»-ի պարբերականը հրատարակելու համար թույլտվություն ստանալու նպատակով Նազարյանցի գրած դիմումը։ Այդ մասին հիշատակություն կա նաև այս ցուցակում № 11-ի ներքո։ Այստեղ

հիշատակված աղդարարությունը հետագայում տպվեց «Հանդէս դրակ. և պատմ.» 2-րդ գրքում։ Տես նաև Նազարյանցի «Երկերը»-ի հատ. 1-ին, էջ 406 և հետ։

№ 11.

«Հանդ. նոր հայախ.» 2-րդ հատ., եր. 389—397 Նազարյանցը գետեղել է մի հոդված «Լաս-կազասի տեսիլը» վերտառությամբ. հատվածի ծանոթագրության մեջ գտնում ենք Լաս-կազասի համառոտ կենսագրականը։

№ 12 (ա և գ).

Ֆրիդերիկոս որդու գաղդի վրա Նազարյանցի կարդացած ճառի մասին, տես Ս. Շահազիզյան, «Հրապարակախոս ձայն», էջ 21 և հետ։ Լեոն սխալաբար նույնացնում է Նազարյանցի էմմանվել որդուն Ֆրիդերիկոսի հետ։

№ 12 (ե—դ).

Ներսիսյան դպրոցում արտասանած ճառերը լույս են տեսել 1871 թ. Թիֆլիսում «Ճառախոսություն և համարատվություն Ներսիսյան աղդային հոդևոր դպրոցի հանդիսավոր գործողության մեջ 1869 թ. հոկտեմբերի 12-ին» ժողովածուի մեջ (Թիֆլիս, 1870 թ.)։ Ճառերից մեկը մի դամրանական է, մյուսը՝ Կ. Շմիթի գործից հանված ընդհանուր մի տեսություն «Պատմություն պեղագողիկայի և այլն» վերնագրով։

№ 12 (գ).

Կեոքչեյանց (նաև՝ Ալամդարյան) Հարություն՝ Մոսկվայի հայ քահանա, տես Մ. Նալբանդյան, «Անտիպ երկեր», էջ 735։

№ 12 (ը).

1878 թվականին Նարպեյը ժամանել էր Պետերբուրգ և Մոսկվա, Բեռլինից, իրև մեկը Խրիմյանի գլխավորությամբ Եվրոպա ուղարկված այն պատվիրակության անդամներից, որը խաղաղության կոնգրեսին պիտի ներկայացներ հայերի բաղձանքները։ Եղյանի արխիվում պահված նամակներից երևում է, որ Նարպեյը այդ պատվիրակության մեջ ռուսական կողմնորոշման ներկայացուցիչ էր, մեկը այն մարդկանցից, որոնք հայ ժողովուրդը համարում էին «քաղաքականապես ռուս»։ Նազարյանցը ողջունի ճառ էր արտասանել, ըստ երևույթին, ի պատիվ Նարպեյի՝ հավանորեն աչքի առաջ ունենալով հենց նրա այդ դիրքավորումը։

№ 12. (թ).

Նազարյանցի այս ճառը արտասանվել է, ըստ երևույթին, Մոսկվայի հայ վաճառականների հավաքույթին, որ գումարվել էր «ժողով» կամ ընկերությունը կազմելու համար, «ժողովի» նախագիծը կազմել էր ինքը՝ Նազարյանցը։ Տես այդ մասին «Արարատ», 1916, էջ 862 և հետ. ու «Միրայել Նալբանդյանի «Անտիպ երկերը», էջ 548 և հետ.։

№ 13.

Այստեղ բերված է Նազարյանցի գրած նամակների ցուցակը։

Ցուցակում հիշատակված Ա. Հ. Լազարյանցը Լազարյան ճեմարանի հոդաբարձու Խրիստաֆոր Լազարևն է, որին Նազարյանցը ուղղել էր մի շարք նամակներ և ուղերձներ դեռ Կազանի համալսարանում պաշտոնավարելու ժամանակ։

Ազաթոն Դ. Ակիմյանը 40—50-ական թվականներին ապրում էր Պետերբուրգում։ 50-ական թվականների վերջերին մեռած էր արդեն, Պատկանում էր բուրժուազիայի «լուսամիտ» մարդկանց շարքին։ Ակիմյանը մեկն էր Պետերբուրգի այն հայերից, որոնք որպես «բերան ազգի» խրախուսում էին Լազարևների դպրոցական ձեռնարկությունները, (տես «Արարատ», 1850, № 50, էջ 230)։ Նրա հանձնարարությամբ է, որ Ն. Աշտարակեցին Թիֆլիս հրավիրեց Գ. Շանշյանին (տես Ե. Երիցյան, «Պատմություն 75-ամյա գոյության Ներսիսյան դպրոցի»։ Թիֆլիս, 1898, 1-ին, 468)։ «Հատկապես հոդատար էր արտասահմանում և Ռուսաստանում» լուսավորյալ կադրեր պատրաստելու հարցում (տես «Լումա, 1903) № 6, էջ 70, (Մ. Նալբանդյան, Ե. Լ. ժ. հ. II, 153)։

Այս չէր խանգարում, որ Ակիմյանը փակեր Գ. Պատկանյանից հանձնարարված Նալբանդյանի առաջ ոչ միայն իր սրտի, այլև իր տան դռները, երբ վերջինս եկել էր Պետերբուրգ համալսարանում հարցաքննվելու և ուսուցչական ոենց ստանալու համար։ (Տես Գրականության և արվեստի խանդարան, Գ. Պատկանյանի Ձեռագիր հիշատակարանը, էջ 411)։

Պարզյան- Սուքիաս վարդապետ, հետագայում կղերամիտ հոգևորականության ղեկավարներից մեկը։

Պ. Սիմեոնյան «Մեղու Հայաստանի» թերթի խմբագիր։

Ստեփան ավագ քահանա (Մանդինյան)՝ «Մեղու Հայաստանի» թերթի հին խմբագիրը՝ կղերամիտ եկեղեցական. նախապես Աշտարակեցու անձնական քարտուղարն էր։

Գևորգ կաթողիկոս—Գևորգ Քերեստեճյան—ամենայն հայոց կաթողիկոս։ Մանկունին Էջմիածնի եպիսկոպոսներից էր՝ Գևորգի ֆավորիտը։ Արել եպիսկոպոս՝ Մխիթարյանը՝ ազգային-պահպանողական եկեղեցական է։ Հայտնի էր իր տպագիր գործերով։ Թողել է ի միջի այլոց ձեռագիր մի աշխատություն, ուր մերկացնում էր Էջմիածնի վանական բարքերը և մասնավորապես Գևորգ կաթողիկոսի առտնին կյանքը, այդ պատճառով էլ հալածվել է Մանկունու կողմից և մեռնելուց հետո թաղվել առանց եկեղեցական ծիսակատարության։ Հավանորեն այս մասին էլ հենց դրում էր Նաղարյանցը։

Սայադնովյանցը հավանորեն Թիֆլիսի Մովսես քահանայ Սայադնովյանն (1810—1883) է, որ աշուղ Սայաթ-Նովայի թոռն էր։

Գ. Վ. Այվազովսկին 1857 թ. ժամանել էր արտասահմանից Ռուսաստան, կառավարության նախաձեռնությամբ նա նշանակվեց Նախիջևանի և Բեսարաբիայի վիճակավոր առաջնորդ։ (Տես Նալբանդյանի «Անտիպ երկեր», էջ 347 և հետ.)։

Ասկարյան, Շորոյան (sic) Գոդոխյան և Ամատունի—Գորպատի համալսարանի հայ ուսանողներից էին։ Նաղարյանցի նամակը անշուշտ գրվել էր ի պատասխան 1857 թ. 5 սեպտ. թվակիր այն գրության, որ ստացել էր սրանցից (տես այդ մասին ստորև № 18 (է) և «Հանդ. գրակ. և պատմ.», 1888, գիրք I, 266 և հետ.)։

Քուչուբեկյան, Հովհաննես. «Հյուսիսափայլի» աշխատակիցներից, բանաստեղծ։ Նաղարյանցի՝ նրա գրած նամակները մասամբ օգտագործել է Լեոն, (Ն. տ. II եր. 305 և հետ.)։ Այդ նամակները պահվում են գրական թանգարանում (Քուչուբեկյանի արխիվում)։

№ 14.

Исаков Մոսկվայի ուսումնարանական շրջանի հոգերարձու։ Христафор Лазарев—տես վերը, № 13-ի ներքո։

Граф Дмитрий Андреевич—անհայտ։

№ 15.

1869—71 թվականներին Թիֆլիսում, Ներսիսյան դպրոցում, Նաղարյանցը տեսչի պաշտոն էր վարում։

№ 16.

Այս համարի ներքո հիշված ձեռագրերից մեզ ծանոթ են 3-րդ և 4-րդ կետերում նշված գրությունները. ներկայիս գրանք գտնվում են պրոֆեսոր Հովսեփ Կուսիկյանի մոտ։

№ 17.

Այս համարի ներքո նշանակված կոնդակները մեզ ծանոթ չեն։

№ 18 և 19.

Այստեղ հիշատակված նամակների ընդհանուր թիվը, ինչպես երևում է փակագծում արված նշումից, հասնում էր 184-ի։ Նամակները հասցեագրված են եղել Նաղարյանցին։ Ցուցակում հիշատակված անուններից մեզ ծանոթ են՝

Սերոբե եպիսկոպոս—հավանորեն Աստրախանի առաջնորդ Սերոբե Կարնեցին, 19-րդ դարի առաջին կեսում հայտնի եկեղեցականներից մեկը, «Ծաղիկ գիտութեանց» վերտառությամբ 1819 թվականին հրապարակված հանրագիտական ժողովածուի հեղինակը։

Աղափիրյան, Գրիգոր, ռուսահայ եկեղեցական (տես Մ. Նալբանդյան, «Անտիպ երկեր», էջ 717)։

Աղաֆոն Ակիմյան, տես վերը, № 13-ի ներքո.

Վ. Ասկարյանց, Շատուրյանց (sic) Ամատունի և Գոդոխյանց, տես վերը, № 13 (ե)։

Մ. Նալբանդյան։— Ինչպես պարզվում է Նալբանդյանի «Անտիպ երկերում» տպված նյութերից, նա բազմաթիվ նամակներ և գրություններ էր ուղղել «Հյուսիսափայլի» խմբագրին, որոնցից միայն մի քանիսն են հայտնի տպագրությամբ։

Հովսեփ Իդմիրյանց՝ Ղզլարցի վաճառական, «Հյուսիսափայլի» մեկենասներից. Տես Մ. Նալբանդյան «Անտիպ երկեր», էջ 730։

Ս. Մ. Պարդյանց. տես վերը, № 13 (8)-ի ներքո։

Սանասարյան Մկրտիչ, վաճառական, հայտնի իր ֆիլանտրոպիական գործունեությամբ (տես Մ. Նալբանդյան, «Անտիպ երկեր», էջ 762) «Հյուսիսափայլի» օժանդակողներից։

Սուլթան Շահյան, Անանիա Սուլթանշահ, «Հյուսիսափայլի» աշխատակիցներից, (տես Մ. Նալբանդյան, «Անտիպ երկեր», էջ 768)։

Խորեն եպիսկոպոս Նարպեյ (տես № 12 (բ)-ի ներքո։

Խ. վ. Ստեփանե (Ս. Ստեփանյան) «Հյուսիսափայլի» աշխատակիցներից՝ Իշխան Բագրատունի կեղծ անունով՝ հետագայում «Հայկական Աշխարհ» ամսագրի (1864—79) խմբագիրը։ Թարգմանել է աշխարհաբար և ծանոթագրել Խորենացու Հայոց Պատմությունը, Գրական Թանգարանում պահված նրա թղթերի մեջ կա 1864 Ստ. Նազարյանցի նրան գրած մի նամակը։

Վ. վ. Բաստամյան, Մխիթար Գոշի դատաստանագրքի հրատարակիչը, «Դպրոց» ամսագրի (1874—76) խմբագիրը։ Նազարյանցին քննադատողներից մեկը։ Մատենադարանում պահված են նրա ձեռագիր օրագրությունները։

Ն. Վ. Մեծատուրյան «Հյուսիսափայլի» աշխատակից։

Բահաթուրյան Աստաքել, հայտնի մանկավարժ։

Հ. Սարկ. Ալամդարյան, տես վերը՝ գեոկչեյան Հսրություն քահանա։

Քաջբերունի—Ս. Տեր-Հովհաննիսյան, «Հյուսիսափայլում» տպված «Տեր-Սարգիս» վեպի և հնադիտական ընդարձակ «Ճանապարհորդությունների» հեղինակը։

Կ. Հայրապետյան, նոր Նախիջևանցի, երբեմն քաղաքագլուխ, Հ. Խալիբյանի հակառակորդներից «Հյուսիսափայլի» օժանդակող լիբերալներից մեկը։

Մատթէոս եպիսկոպոս—թեմական առաջնորդ—Бутков պետական քարտուղար, Կովկասյան Կոմիտեի նախագահ։

И. Д. Делянов— Երբեմն ժողովրդական լուսավորության մինիստր։

М. Т. Навроцкий— արևելագետ, արաբերենի պրոֆեսոր Պետերբուրգի համալսարանում։

Г. Султаншах— «Հյուսիսափայլին» համակրողներից, տես Նալբանդյանի «Անտիպ երկեր», էջ 769)։

Кн. Абамелик Лазарев — Լազարյան ճեմարանի հոգաբարձու։

№ 20 (ժե).

Крузенштерн—Իշխան Բարիատինսկու Կովկասյան փոխարքայության ժամանակ նրա գրասենյակի դիրեկտոր— 1857 թվականի մարտի 22-ին լուսավորության մինիստր Նորովին ուղղած իր դիմումի մեջ Նազարյանցը հայտնում է, որ ինքը ստացել է Կրուզենշտերնի 1856 թվականի դեկտեմբերի 31-ի գրությունն այն մասին, որ իշխան Բարիատինսկու կողմից առարկություն չկա «Հյուսիսափայլի» հրատարակման վերաբերյալ։ Հավանական է, որ ներկա ցուցակում հիշված գրությունը հենց Նազարյանցի դիմումի մեջ հիշատակվածն է։ Նազարյանցի նամակներից երևում է, նաև, որ Կրուզենշտերնի միջոցով նա դիմում էր ուղղել Բարիատինսկուն, խնդրելով նրա աջակցությունը «Հյուսիսափայլ»-ը տարածելու համար։ «Պիտո էր մեզ դիմել դեպի գավազանի ոտքը և դրա միջնորդությամբ ջանալ ներդործել մեր հայերի կամքի վերա», գրում էր Նազարյանցը (Տե՛ս Լեո, «Ս. Նազարյանց», II, 13)։